

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 21

ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ԼԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով

Հաստատել ավագանու 29.12.2014թ. հերթական նիստի օրակարգը

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

2. 2015 թվականի ընթացքում համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույթաչափերը սահմանելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

3. Միսավան համայնքի ղեկավարի նոր վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը հաստատելու և Միսավան համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 25-ի թիվ 7 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄԲԱՏ

4. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ

[Handwritten signatures for items 1-6]


[Handwritten signature for item 6]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Handwritten signature]

ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 22-Ն

2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ՈՒ ՎՃԱՐՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, և 11-րդ հոդվածների պահանջներով

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների ներառյալ՝ ոչ հիմնական շինության տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական ամառանոցային տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր բնօրինակ մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ

2. Շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, տնօրոգման, վերականգնման, արվեստականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, տեղական տուրքը սահմանել 1500 դրամ:

3. Շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ:

4. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 3000 դրամ:

5. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 3000 դրամ:

6. Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանել 350 դրամ:

7. Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանել ամսեկան 500 դրամ:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել 2000 դրամ:

9. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱԿԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

հւնոյ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱԿԱՆ ՍՄԲԱՏ

4. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Վ. Շիրազ


5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 23

ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՎՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ 25.01.2013 թ. թիվ 7 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնքի ղեկավարի նոր վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :
2. Միսավան համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 25-ի թիվ 7 որոշումը ուժը կորցրած ճանաչել:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -6

Դեմ -0

Չեղնակալ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄԲԵՏ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ